

ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՏԱՐԲԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՍԱՆ ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բանկի գործունեության միասնական հաշվետվությունը (ԲԳՄՀ) վերլուծական գործիք է, որը հասցեագրված է ինչպես բանկի վերահսկող, այնպես էլ կառավարման մարմիններին: Ընդհանուր առմամբ այն արտահայտում է բանկի ղեկավարների կայացրած որոշումների և ընդհանուր տնտեսական պայմանների ազդեցությունը բանկի ֆինանսական վիճակի և հաշվեկշռային հոդվածների վրա:

ԲԳՄՀ-ի նպատակը հիմնական ֆինանսատնտեսական ցուցանիշների միջոցով բանկի ֆինանսական վիճակի արդյունավետ գնահատումն է: ԲԳՄՀ-ում ներառված ցուցանիշների հիման վրա կարելի է իրականացնել բանկի կապիտալի համարժեքության, ակտիվների որակի, իրացվելիության, եկամտաբերության, աճի տեմպերի և հնարավորությունների, ակտիվների և պասիվների արդյունավետ կառավարման գնահատում: Վերլուծության մեջ ներկայացվում է նաև նախորդ ժամանակահատվածների տվյալները, ինչը հնարավորություն է ընձեռնում գնահատել բանկի գործունեությունը դինամիկայի մեջ:

ԲԳՄՀ – ում ներկայացված տվյալները բաժանվում են հետևյալ տարատեսակների.

1. բանկի անհատական ցուցանիշներ
2. խմբի միջին ցուցանիշները
3. խմբում ընդգրկված բանկերի՝ տվյալ ցուցանիշի գծով մաքսիմալ և մինիմալ արժեքները
4. բանկի «տեղը» խմբի մեջ տվյալ ցուցանիշի գծով

Խմբում ընդգրկվում են նորմատիվային դաշտում գործող բոլոր բանկերը:

Բանկի «տեղը խմբում» ցուցանիշը բնութագրում է բանկի տեղը համապատասխան ֆինանսական միջավայրում, համեմատած խմբում ընդգրկված այլ բանկերի, հաշվի առնելով կոնկրետ ցուցանիշները: Ընդ որում, բանկի բարձր կամ ցածր դիրքը կոնկրետ ցուցանիշի գծով համեմատած խմբի միջինի հետ չի կարող բնութագրել բանկի լավ կամ վատ վիճակը: Միայն վերլուծելով ԲԳՄՀ-ում ներառված ամբողջ տեղեկատվությունը կարելի է եզրակացություն կազմել բանկի գրաված տեղի և իր ֆինանսական վիճակի միջև կապի առկայության վերաբերյալ:

Այսպիսով տվյալների համախումբը հնարավորություն է ընձեռնում ոչ միայն գնահատել բանկի անհատական ցուցանիշները և դինամիկան, այլ դրանք համեմատել խմբի բանկերի միջին ցուցանիշների հետ և որոշակի հետևություններ անել իր գործունեության այս կամ այն բնագավառի վերաբերյալ:

ԲԳՄՀ ներկայացվում է եռամսյակը մեկ անգամ և բաղկացած է 17 գլուխներից:

ԲԳՄՀ-ում պարունակվող տեղեկություններն իրենցից ներկայացնում են կամ ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվումների մեջ ընդգրկված ցուցանիշներ կամ այդ հաշվետվություններում ընդգրկված ցուցանիշների հիման վրա հաշվառված այլ ցուցանիշներ:

1-16 գլուխներում ներառված տվյալները ներկայացվում են չորս ժամանակահատվածների համար: Օրինակ՝ 2003թ. մարտի 31-ի դրությամբ ներկայացվող ԲԳՄՀ-ում ընդգրկված են տվյալները 31.03.2003թ. դրությամբ, 31.03.2002թ. դրությամբ, 31.12.2002թ. դրությամբ, 31.12.2001թ. դրությամբ և 31.12.2000թ. դրությամբ:

17-րդ գլխում ներառված տվյալները ներկայացվում է հաշվետվությունը ներկայացվող եռամսյակի և դրան նախորդող չորս եռամսյակների համար: Օրինակ՝ 2003թ. մարտի 31-ի դրությամբ ներկայացվող ԲԳՄՀ-ում ընդգրկված են տվյալները 31.03.2003թ. դրությամբ, 31.12.2002թ. դրությամբ, 30.09.2002թ. դրությամբ, 30.06.2002թ. դրությամբ և 31.03.2002թ. դրությամբ:

Գլուխ 1

ԱՄՓՈՓ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Միջին ակտիվներ

Բանկի եռամսյակային միջին ակտիվների գումարը:

Միջին ընդհանուր կապիտալ

Բանկի եռամսյակային միջին կապիտալի գումարը:

Չբաշխված շահույթ

Բանկի ընթացիկ ժամանակաշրջանի ստացված չբաշխված շահույթ (վնասը):

Խմբում ընդգրկված բանկերի քանակը

Խումբ է համարվում ՀՀ բանկային համակարգը (ներառում է նորմատիվային դաշտում գործող բանկերը և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը):

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ

Այս բաժնում հաշվարկվում են բանկի եռամսյակի վերջին ամսվա դրությամբ միջին ամսեկան Ն_1^1 , Ն_1^2 , Ն_2^1 , Ն_2^2 , Ն_3 , Ն_4^1 , Ն_4^2 , արտարժույթի տնօրինման հիմնական տնտեսական նորմատիվները: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 3 և 7 հաշվետվություններից:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ և ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Այս բաժնում հաշվառվում է բանկի եկամուտների հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին: Ընդ որում եկամուտների և ծախսերի մեծությունները տարեկանացված են՝ օգտագործելով համապատասխան գործակիցներ.

Մարտ – 12/3

Հունիս – 12/6

Սեպտեմբեր – 12/ 9

Դեկտեմբեր – 12/12

Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 5 հաշվետվությունից:

Ընդամենը տոկոսային եկամուտներ

Բանկի կողմից ստացված տարեկանացված տոկոսային եկամուտների հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին:

Ընդամենը տոկոսային ծախսեր

Բանկի կողմից կատարված տարեկանացված տոկոսային ծախսերի հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին:

Զուտ տոկոսային եկամուտներ

Ջուտ տոկոսային եկամուտների հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին:

Ընդամենը ոչ տոկոսային եկամուտներ

Բանկի կողմից ստացված տարեկանացված ոչ տոկոսային եկամուտների հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին:

Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր

Բանկի կողմից կատարված տարեկանացված ոչ տոկոսային ծախսերի հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին:

Ջուտ ոչ տոկոսային եկամուտներ

Տարեկանացված Ջուտ ոչ տոկոսային եկամուտների հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին:

Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին

Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր և հատուկ պահուստներին, արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին կատարված տարեկանացված մասհանումների հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին:

Պահուստներին կատարված մասհանումների վերադարձ

Այստեղ ներառվում են վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր և հատուկ պահուստներից և արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստից վերադարձի հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին:

Ջուտ մասհանումներ

Ակտիվների հնարավոր կորուստների պահուստների հատկացումների և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված մասհանումների վերադարձի տարբերության հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին:

Շահույթ մինչև հարկվելը

Տարեկանացված շահույթ մինչև հարկվելը / տարեսկզբից միջին ակտիվներ:

Ջուտ շահույթ

Տարեկանացված Ջուտ շահույթի և տարեսկզբից միջին ակտիվների գումարի հարաբերակցությունը:

Հաշվարկված շահաբաժիններ

Տարեկանացված հաշվարկված շահաբաժինների հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին:

Չբաշխված շահույթ

Տարեկանացված չբաշխված շահույթի հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին:

Ձուտ շահույթ / միջին ընդհանուր ակտիվներ

Տարեկանացված զուտ շահույթի հարաբերակցությունը տարեսկզբից միջին ընդհանուր ակտիվների մեծությանը:

Ձուտ շահույթ / միջին ընդհանուր կապիտալ

Տարեկանացված զուտ շահույթի հարաբերակցությունը տարեսկզբից միջին ընդհանուր կապիտալի մեծությանը:

Ձուտ ոչ տոկոսային եկամուտներ / զուտ տոկոսային եկամուտներ

Բանկի տարեկանացված զուտ ոչ տոկոսային եկամուտների և զուտ տոկոսային եկամուտների հարաբերակցությունը:

Ձուտ շահույթ / բաժնետոմսերի քանակ

Բանկի տարեկանացված զուտ շահույթի և թողարկված բաժնետոմսերի քանակի հարաբերակցությունը:

ՄԱՐԺԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միջին եկամտաբեր ակտիվներ / միջին ընդհանուր ակտիվներ

Տարեսկզբից եկամտաբեր ակտիվների և միջին ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Ծախսատար պարտավորություններ / միջին ընդհանուր ակտիվներ

Տարեսկզբից ծախսատար պարտավորությունների և միջին ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Տոկոսային եկամուտներ / միջին եկամտաբեր ակտիվներ

Բանկի տարեկանացված տոկոսային եկամտի և տարեսկզբից եկամտաբեր ակտիվների հարաբերակցությունը:

Տոկոսային ծախսեր / միջին եկամտաբեր ակտիվներ

Բանկի կողմից կատարված տարեկանացված տոկոսային ծախսերի և տարեսկզբից եկամտաբեր ակտիվների հարաբերակցությունը:

Ձուտ տոկոսային եկամուտներ / միջին եկամտաբեր ակտիվներ

Բանկի տարեկանացված զուտ տոկոսային եկամտի և տարեսկզբից եկամտաբեր ակտիվների հարաբերակցությունը:

ՎԱՐԿԵՐԻ և ԳԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վարկերի գծով պահուստի հաշվարկային մեծություն / վարկային ներդրումներ

Վարկերի գծով պահուստի հաշվարկային մեծության (ստանդարտ, հսկավող, ոչ ստանդարտ, կասկածելի դասակարգված վարկերը բազմապատկած դրանց կշիռներով՝ ստանդարտ վարկեր * 0.01 + հսկվող վարկեր * 0.1 + ոչ ստանդարտ վարկեր * 0.2 + կասկածելի վարկեր * 0.5) և վարկային ներդրումների հարաբերակցությունը: Տվյալները վերցվում են

բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6 հաշվետվությունից:

Ղեբիտորական պարտքերի պահուստի հաշվարկային մեծություն / ղեբիտորական պարտքեր

Ղեբիտորական պարտքերի գծով պահուստի հաշվարկային մեծություն (ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի դասակարգված ղեբիտորական պարտքերը բազմապատկած դրանց կշիռներով՝ ստանդարտ ղեբիտորական պարտքեր * 0.01 + հսկվող ղեբիտորական պարտքեր * 0.1 + ոչ ստանդարտ ղեբիտորական պարտքեր * 0.2 + կասկածելի ղեբիտորական պարտքեր * 0.5) և ղեբիտորական պարտքերի գումարի հարաբերակցությունը: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6 հաշվետվությունից:

Վարկերի գծով պահուստի մնացորդ / վարկային ներդրումներ

Տվյալ օրվա դրությամբ վարկերի գծով հնարավոր կորուստների ծածկման պահուստի հարաբերակցությունը վարկային ներդրումների գումարին: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6 հաշվետվությունից:

Ղեբիտորական պարտքերի գծով պահուստի մնացորդ / ղեբիտորական պարտքեր

Տվյալ օրվա դրությամբ ղեբիտորական պարտքերի գծով հնարավոր կորուստների ծածկման պահուստի հարաբերակցությունը ղեբիտորական պարտքերի գումարին: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6 հաշվետվությունից:

Վարկերի և ղեբիտորական պարտքերի կորուստների ծածկույթը շահույթով

Տարեկանացված գործառնական եկամուտների և վարկերի ու ղեբիտորական պարտքերի գծով հնարավոր կորուստների ծածկման պահուստի գումարի հարաբերակցությունը զուտ կորուստների մեծությանը (հատկացումներ վարկերի և ղեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին – (եռամսյակի ընթացքում վերադարձներ դասակարգված բայց դեռևս դուրս չգրված ակտիվների գծով + եռամսյակի ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված վարկերի և ղեբիտորական պարտքերի մարում): Տվյալները վերցվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 5, 6, 12 հաշվետվություններից:

Վարկերի զուտ դուրսգրումներ / վարկային ներդրումներ

Եռամսյակի ընթացքում վարկերի զուտ դուրս գրումների (հետհաշվեկշիռ դուրս գրված վարկեր – հետհաշվեկշիռ դուրս գրված վարկերի մարում) հարաբերակցությունը վարկերի գումարին: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6, 12 հաշվետվություններից:

Ղեբիտորական պարտքերի զուտ դուրսգրումներ / ղեբիտորական պարտքեր

Եռամսյակի ընթացքում ղեբիտորական պարտքերի զուտ դուրս գրումների (հետհաշվեկշիռ դուրս գրված ղեբիտորական պարտքեր – հետհաշվեկշիռ դուրս գրված

դեբիտորական պարտքերի մարում) հարաբերակցությունը դեբիտորական պարտքերի գումարին: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6, 12 հաշվետվություններից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների գծով գուտ մասհանումներ / վարկային ներդրումներ, դեբիտորական պարտքեր

Տարեկանացված գուտ մասհանումների (հատկացումներ կորուստների գծով -- վերադարձ) հարաբերակցությունը վարկերի և դեբիտորական պարտքերի գումարին: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 5, 6 հաշվետվություններից:

Ժամկետանց վարկեր / վարկային ներդրումներ

Բանկի դրամային և արտարժույթային ժամկետանց վարկերի և միջբանկային ավանդների հարաբերակցությունը ընդհանուր վարկային ներդրումների գումարին: Տես՝ 8-րդ գլուխը:

Ժամկետանց դեբիտորական պարտքեր / դեբիտորական պարտքեր

Բանկի դրամային և արտարժույթային ժամկետանց դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հարաբերակցությունը դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գումարին: Տես՝ 8-րդ գլուխը:

Երկարաձգված վարկեր / վարկային ներդրումներ

Բանկի դրամային և արտարժույթային երկարաձգված վարկերի և միջբանկային ավանդների հարաբերակցությունը ընդհանուր վարկային ներդրումների գումարին: Տես՝ 8-րդ գլուխը:

Երկարաձգված դեբիտորական պարտքեր / դեբիտորական պարտքեր

Բանկի դրամային և արտարժույթային երկարաձգված դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հարաբերակցությունը դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գումարին: Տես՝ 8-րդ գլուխը:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցլահանց պարտավորությունների կախվածության աստիճան

Ամսվա վերջին օրվա դրությամբ բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցլահանց պարտավորությունների տարբերության հարաբերակցությունը ժամկետային ակտիվների գումարին: Ընդ որում, ժամկետային ակտիվների կազմում ընդգրկվում են բանկի 1-3 տարի և 3 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվները, որոնց գումարը գտվում է ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով առաջացած 1-3 տարի և 3 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող պարտավորությունների գումարի չափով: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 3, 9 հաշվետվություններից:

Ձուտ վարկեր և դեբիտորական պարտքեր / ընդհանուր ակտիվներ

Վարկային ներդրումների և դեբիտորական պարտքերի գումարի և վարկերի ու դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ծածկման պահուստի տարբերության հարաբերակցությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բանկի ընդհանուր ակտիվների գումարին:

Գլխավոր իրացվելիություն

Ամսվա վերջին օրվա դրությամբ բանկի բարձր իրացվելի ակտիվների, հիմնական միջոցների * 0.5, ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի * 0.5 և հսկվող վարկերի և դեբիտորական պարտքերի * 0.3 հանրագումարի հարաբերակցությունը բանկի եռամսյակային միջին պարտավորություններին:

ԿԱՊԻՏԱԼԻԶԱՑԻԱ

Միջին նորմատիվային հիմնական կապիտալ / միջին նորմատիվային ընդհանուր կապիտալ

Ամսվա վերջին օրվա դրությամբ բանկի միջին նորմատիվային հիմնական կապիտալի և ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 3 հաշվետվություններից:

Հաշվարկված շահաբաժիններ / գուտ շահույթ

Բանկի հաշվարկված շահաբաժինների և գուտ շահույթի հարաբերակցությունը:

Չբաշխված շահույթ / միջին ընդհանուր կապիտալ

Տարեկանացված չբաշխված շահույթի հարաբերակցությունը տարեսկզբից միջին ընդհանուր կապիտալի մեծությանը: Տես՝ 2-րդ գլուխը:

Ակտիվների գծով հնարավոր կորուստների առավելագույն սահման / ընդհանուր կապիտալ

Ակտիվների գծով առավելագույն չափերով պահուստի հաշվարկային մեծության ((ստանդարտ վարկեր, դեբիտորական պարտքեր, հետհաշվեկշռային հոդվածներ) * 0.02, (հսկվող վարկեր, դեբիտորական պարտքեր, հետհաշվեկշռային հոդվածներ) * 0.15, (ոչ ստանդարտ վարկեր, դեբիտորական պարտքեր, հետհաշվեկշռային հոդվածներ) * 0.25, (կասկածելի վարկեր, դեբիտորական պարտքեր, հետհաշվեկշռային հոդվածներ) * 0.75, ոչ ռիսկային դասակարգված ինվեստիցիոն արժեթղթեր * 0.02, ռիսկային ինվեստիցիոն արժեթղթեր * 0.2, միջին ռիսկային ինվեստիցիոն արժեթղթեր * 0.7, բարձր ռիսկային ինվեստիցիոն արժեթղթեր) հարաբերակցությունը ամսվա վերջին օրվա դրությամբ բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալին: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 3, 6 հաշվետվություններից:

Ռիսկով ճշգրտված կապիտալ / ռիսկով ճշգրտված ակտիվներ

Այստեղ ռիսկով ճշգրտված կապիտալը հաշվարկվում է հետևյալ կերպ՝ ամսվա վերջին օրվա դրությամբ նորմատիվային ընդհանուր կապիտալից պակասեցվում է պահուստի հաշվարկային մեծությունը, ընդ որում վարկերը, դեբիտորական պարտքերը և հետհաշվեկշռային հողվածները հաշվառվում են նորմալ կշիռներով, իսկ ինվեստիցիոն արժեթղթերը՝ մաքսիմալ կշիռներով ((ստանդարտ վարկեր, դեբիտորական պարտքեր, հետհաշվեկշռային հողվածներ) * 0.01, (հսկվող վարկեր, դեբիտորական պարտքեր, հետհաշվեկշռային հողվածներ) * 0.1, (ոչ ստանդարտ վարկեր, դեբիտորական պարտքեր, հետհաշվեկշռային հողվածներ) * 0.2, (կասկածելի վարկեր, դեբիտորական պարտքեր, հետհաշվեկշռային հողվածներ) * 0.5, ոչ ռիսկային դասակարգված ինվեստիցիոն արժեթղթեր * 0.02, ռիսկային ինվեստիցիոն արժեթղթեր * 0.2, միջին ռիսկային ինվեստիցիոն արժեթղթեր * 0.7, բարձր ռիսկային ինվեստիցիոն արժեթղթեր): Ռիսկով ճշգրտված ակտիվները՝ ամսվա վերջին օրվա դրությամբ ռիսկով կշռված ակտիվներից պակասեցվում է պահուստի հաշվարկային մեծությունը, ընդ որում վարկերը, դեբիտորական պարտքերը և հետհաշվեկշռային հողվածները հաշվարկվում են նորմալ կշիռներով, իսկ ինվեստիցիոն արժեթղթերը՝ մաքսիմալ կշիռներով:

Խնդրահարույց ակտիվների ծածկույթը

Խնդրահարույց վարկերի, դեբիտորական պարտքերի, հետհաշվեկշռային հողվածների և ինվեստիցիոն արժեթղթերի (ինվեստիցիոն արժեթղթեր – ոչ ռիսկային ինվեստիցիոն արժեթղթեր - անժամկետ ինվեստիցիոն արժեթղթեր) հարաբերակցությունը ամսվա վերջին օրվա դրությամբ նորմատիվային ընդհանուր կապիտալի, վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի և ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի գումարին:

ԱՃԻ ՏԵՄՊԵՐ

Այս բաժնում տրվում է ընդհանուր ակտիվների, հիմնական կապիտալի, զուտ վարկային ներդրումների և դեբիտորական պարտքերի, բարձր իրացվելի ակտիվների, ցպահանջ պարտավորությունների աճը վերջին 12 ամիսների ընթացքում $(X_2 - X_1) / X_1 * 100\%$:

Գլուխ 2

ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Այս գլխում նկարագրվում են տարեսկզբից բանկի եկամուտների և ծախսերի կազմը ու մեծությունը: Ընդ որում եկամուտների և ծախսերի մեծությունները տարեկանացված են՝ օգտագործելով համապատասխան գործակիցներ:

Մարտ՝ 12/3

Հունիս՝ 12/6

Սեպտեմբեր՝ 12/9

Դեկտեմբեր՝ 12/12

Այս ենթաբաժնում ներկայացվող ցուցանիշները վերցվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող թիվ 5 հաշվետվությունից:

Տնտեսությանը տրված վարկերից ստացված տոկոսներ

Ստացված տոկոսներ տնտեսությանը տրված վարկերից՝ այդ թվում ռեզիդենտ իրավաբանական անձանցից, ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, բանկի հետ կապված անձանց տրամադրված միջոցներից, աշխատակիցներին տրամադրված միջոցներից:

Օվերդրաֆտից, օվերնայթից և վարկային քարտերից ստացված տոկոսներ

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Լիզինգից ստացված տոկոսներ

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Հետգնման պայմանագրերից ստացված տոկոսներ

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Պետական արժեթղթերից ստացված տոկոսներ

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Ոչ պետական արժեթղթերից ստացված տոկոսներ

Բանկերի և ձեռնարկությունների կողմից թողարկված արժեթղթերից ստացված տոկոսներ:

ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ

Առևտրային բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացվելիք տոկոսներ:

Թղթակցային հաշիվներից ստացված տոկոսներ

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Այլ տոկոսային եկամուտներ

Այլ գործունեությունից ստացվելիք տոկոսներ և ակրեդիտիվներից ստացված տոկոսներ:

Ընդամենը տոկոսային եկամուտներ

Բանկի կողմից ստացված բոլոր տոկոսային եկամուտների հանրագումարը տվյալ ժամանակաշրջանի համար, ընդ որում.

1. ռեզիդենտներից ստացված տոկոսային գումարներ`

ռեզիդենտների հետ գործարքներից ստացված տոկոսային եկամուտներ:

2. ոչ ռեզիդենտներից ստացված տոկոսային գումարներ`

ոչ ռեզիդենտների հետ գործարքներից ստացված տոկոսային եկամուտներ:

Ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներ

Բանկի կողմից ներգրավված ժամկետային ավանդների գծով տոկոսային ծախսերը, այդ թվում` ռեզիդենտ իրավաբանական անձանց և հիմնարկների, ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ռեզիդենտ ոչ առևտրային իրավաբանական անձանց ավանդների դիմաց վճարված տոկոսները:

Ցպահանջ պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ

Բանկի կողմից ներգրավված ցպահանջ ավանդների գծով տոկոսային ծախսերը, այդ թվում` ռեզիդենտ իրավաբանական անձանց և հիմնարկների, ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ռեզիդենտ ոչ առևտրային իրավաբանական անձանց բանկային հաշիվների ու ավանդների դիմաց վճարված տոկոսները:

Լիզինգի դիմաց վճարված տոկոսներ

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Թղթակցային հաշիվների դիմաց վճարված տոկոսներ

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Հետգնման պայմանագրերի գծով պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

ՀՀ ԿԲ-ից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցներից վճարված տոկոսներ

Բանկերից և այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված միջոցների դիմաց վճարված տոկոսներ

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ բանկ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Այլ ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ

Այստեղ ներառվում են օվերդրաֆտի, օվերնայթի դիմաց վճարված տոկոսները, տոկոսային ծախսերը բանկի կողմից թողարկված արժեթղթերի գծով և ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունների դիմաց:

Հաշվեգրված, բայց չհավաքագրված չաշխատող ակտիվների տոկոսների գծով

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Այլ տոկոսային ծախսեր

Այս հաշվում ընդգրկվում են տոկոսային ծախսերը ավանդների ապահովագրության դիմաց, ստորադաս փոխառությունների դիմաց վճարված տոկոսները, այլ տոկոսային ծախսերը:

Ընդամենը տոկոսային ծախսեր

Բանկի կողմից իրականացված բոլոր տոկոսավճարների հանրագումարը տվյալ ժամանակաշրջանի համար, ընդ որում.

1. ռեզիդենտներին վճարված տոկոսներ`

ռեզիդենտների հետ գործարքների դիմաց հաշվարկված տոկոսային ծախսեր

2. ոչ ռեզիդենտներին վճարված տոկոսներ`

ոչ ռեզիդենտների հետ գործարքների դիմաց հաշվարկված տոկոսային ծախսեր

Չուտ տոկոսային եկամուտներ

Տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի տարբերությունն է:

Ոչ տոկոսային եկամուտներ

Մանրամասն նկարագրված է 3-րդ գլխում

Ոչ տոկոսային ծախսեր

Մանրամասն նկարագրված է 3-րդ գլխում

Չուտ ոչ տոկոսային եկամուտներ

Ոչ տոկոսային եկամուտների և ոչ տոկոսային ծախսերի տարբերությունն է:

Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին

Այստեղ ներառվում են վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր և հատուկ պահուստներին, արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին կատարված մասհանումները:

Պահուստներին կատարված մասհանումների վերադարձ

Այստեղ ներառվում են վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր և հատուկ պահուստներից և արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստից վերադարձը, այդ թվում դասակարգված բայց դեռևս դուրս չգրված ակտիվների գծով:

Ձուտ մասհանումներ

Ակտիվների հնարավոր կորուստների պահուստների հատկացումների և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված մասհանումների վերադարձի տարբերությունն է:

Շահույթ մինչև հարկվելը

Այն հաշվարկվում է հետևյալ ձևով՝ գուտ տոկոսային եկամտի և գուտ ոչ տոկոսային եկամտի հանրագումարը պակասեցվում է գուտ մասհանումների գումարի չափով:

Ձուտ շահույթ

Շահույթը մինչև հարկվելը պակասեցվում է շահութահարկի գումարի մեծությամբ:

Հաշվարկված շահաբաժիններ

Սեփականատերերին վճարված շահաբաժինների մեծությունը, այդ թվում արտոնյալ և սովորական բաժնետոմսերի գծով:

Չբաշխված շահույթ

Ձուտ շահույթի և հաշվարկված շահաբաժինների գումարի տարբերությունն է:

Գլուխ 3

ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Այս գլխում նկարագրվում է տարեսկզբից բանկի ոչ տոկոսային եկամուտների և ծախսերի կառուցվածքը ըստ հոդվածների: Տվյալները լրացվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 5 հաշվետվությունից:

Ստացված կոմիսիոն վճարներ

Այստեղ հաշվարկվում են բանկի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ստացված միջնորդավճարները և գանձապետարանի սպասարկումից ստացված եկամուտները:

Երաշխիքներից, ակրեդիտիվներից և հավատարմագրային գործունեությունից ստացված եկամուտներ

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Վերագնահատումից ստացված եկամուտներ

Այստեղ ներառվում են արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերությունը, հիմնական միջոցների վերագնահատումից ստացված զուտ եկամուտները, առևտրային նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված զուտ շահույթը:

Ֆակտորինգից ստացված եկամուտ

Այստեղ ներառվում են ֆակտորինգից ստացված զուտ եկամուտները: Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Առևտրային գործունեությունից ստացված եկամուտ

Այստեղ ներառվում են՝

1. արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտները,
2. հետգնաման պայմանագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից զուտ եկամուտները,
3. արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտներ,
4. հիմնական միջոցների օտարումից ստացված զուտ եկամուտներ
5. թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով և հուշադրամներով գործառնություններից ստացված զուտ շահույթ,
6. հեջավորման ամանցյալ գործիքներից զուտ եկամուտներ:

Այլ ոչ տոկոսային եկամուտներ

Դրանք են՝

1. այլ կամակերպություններում ներդրումներից ստացված եկամուտներ,
2. արտասովոր եկամուտ,
3. ստացված տույժեր տուգանքներ,
4. այլ ոչ տոկոսային եկամուտներ:

Ընդամենը ոչ տոկոսային եկամուտ

Բանկի կողմից ստացված ոչ տոկոսային եկամուտների հանրագումարը տվյալ ժամանակաշրջանի համար:

Անձնակազմի գծով ծախսեր

Այստեղ ներառվում են անձնակազմի գծով հաշվարկված աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները, գործուղման ծախսերը, աշխատավարձից բացի աշխատողներին տրված այլ փոխհատուցումները և սոցիալական պահանջների ֆինանսավորումը, հատկացումները կենսաթոշակային, զբաղվածության և սոցիալական ապահովագրության համար, աշխատակիցների ուսուցման ծախսերը:

Վարձավճարներ և հիմնական միջոցների գծով ծախսեր

Այստեղ հաշվարկվում են ամորտիզացիոն մասհանումները, բանկի շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճարները, շենքերի տնտեսական պահպանության ծախսերը:

Վճարված կոմիսիոն վճարներ

Լրացվում է բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացված թիվ 5 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Այլ ոչ տոկոսային ծախսեր

Այստեղ ներառվում են հետևյալ տարրերը՝

ա) հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարներ,

բ) վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր,

գ) գովազդային, ներկայացուցչական ծախսեր,

դ) գրասենյակային և տպագրական ծախսեր,

ե) աուդիտային և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր,

զ) համակարգչային ծրագրերի, սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսերը,

է) տրանսպորտային ծախսեր,

ը) կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսերը,

թ) վճարված տույժերը և տուգանքները, ապահովագրության գծով ծախսեր,

ժ) երաշխիքներից պարտամուրհակների ընդունման ակրեդիտիվներով և լիազորագրային գործառնությունների գծով ծախսեր,

ի) արտասովոր ծախսեր,

յ) այլ ոչ տոկոսային ծախսեր:

Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր

Բանկի կողմից կատարած ոչ տոկոսային ծախսերի հանարգումարը տվյալ ժամանակաշրջանի համար:

Մասնաճյուղերի քանակը ՀՀ-ում

Մասնաճյուղերի քանակը արտերկրում

Այս տողերը լրացվում են բանկի ՀՀ տարածքում և արտերկրում մասնաճյուղերի քանակներին համապատասխան:

Մեկ տարածքային ստորաբաժանմանը ընկնող ակտիվների մեծությունը

Հաշվարկվում է որպես եռամսյակի ամեն ամսվա վերջին օրվա դրությամբ ակտիվների միջին մեծության հարաբերակցություն բանկի ՀՀ-ում և արտերկրում մասնաճյուղերի քանակին:

Բանկի հիմնական գործունեության հետ կապված աշխատակիցների քանակը

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող թիվ 25 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Բանկի հիմնական գործունեության հետ չկապված աշխատակիցների քանակը

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող թիվ 25 հաշվետվության տվյալներին համապատասխան:

ԿՇԻՈՒԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ

Այս բաժնում հաշվարկվում են բանկի վերը նկարագրած ոչ տոկոսային ծախսերի և զուտ ոչ տոկոսային եկամուտների հարաբերակցությունը տարեսկզբից միջին ակտիվների գումարին, որոնք գտվում են ռեպո համաձայնագրերի գծով բանկի ունեցած պարտավորությունների չափով: Ընդ որում, նշված որ տոկոսային ծախսերը և զուտ ոչ տոկոսային եկամուտները տարեկանացված են:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ ԱՅԼ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Մեկ աշխատակցին ընկնող միջին ծախսեր

Այս գործակիցը հաշվարկվում է որպես անձնակազմի գծով կատարված ծախսերի մեծության և բանկի աշխատակիցների քանակի հարաբերակցություն:

Մեկ աշխատակցին ընկնող միջին ակտիվներ

Հաշվարկվում է որպես եռամսյակային միջին ակտիվների և բանկի աշխատակիցների քանակի հարաբերակցություն:

Հարկերի սահմանային գործակից

Հաշվարկվում է որպես բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով կատարված կանխավճարների և բանկի զուտ տոկոսային և զուտ ոչ տոկոսային եկամուտների գումարի հարաբերակցություն:

ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ կամ ԾԱԽՍԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս բաժնում նկարագրվում է բանկի հիմնական գործառնությունների եկամտաբերությունը: Բանկի կողմից ստացված տոկոսային և ոչ տոկոսային եկամուտը այստեղ հարաբերվում է իրականացված գործարքների ծավալին: Ընդ որում, բանկի կողմից ստացված եկամուտը տարեկանացվում է:

Եկամտաբերությունը վարկային, ֆակտորինգային և լիզինգային գործունեությունից

Հաշվարկվում է որպես տնտեսությանը տրված վարկերից, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական, իրավաբանական անձանց և հիմնարկներին տրամադրած օվերդրաֆտներից, վարկային քարտերից, աշխատակիցներին տրամադրած միջոցներից, բանկի հետ կապված անձանց տրամադրած միջոցներից, լիզինգից և ֆակտորինգից ստացված եկամտի հարաբերակցությունը տարեսկզբից ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրած միջին վարկերի քանակի և տարեսկզբից իրականացված միջին լիզինգի և ֆակտորինգի գումարին:

Արժեթղթերի եկամտաբերությունը

Հաշվարկվում է որպես պետական գանձապետական արժեթղթերից, բանկերի և ձեռնարկությունների կողմից թողարկված արժեթղթերից ստացված տոկոսների, պետական և ոչ պետական արժեթղթերի վաճառքից, պետական և ոչ պետական արժեթղթերի վերագնահատումից, պետական և ոչ պետական արժեթղթերի վերավաճառքից ստացված զուտ եկամուտի, այլ կազմակերպություններում ներդրումներից ստացված եկամուտի հարաբերակցությունը տարեսկզբից ձեռք բերված պետական և ոչ պետական արժեթղթերի գումարին:

Եկամտաբերությունը բանկերում և ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից

Կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսների, որոնք գտված են հետգնման պայմանագրերի գծով ստացված գումարներով, թղթակցային հաշիվներից, առևտրային բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից, օվերդրաֆտից և օվերնայթից ստացված տոկոսների հարաբերակցությունը ՀՀ ԿԲ նկատմամբ տարեսկզբից բանկի ունեցած պահանջներին, տարեսկզբից բանկի եկամտաբեր թղթակցային հաշիվների և բանկերում ու այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցների գումարին:

Եկամտաբերությունը ռեպո համաձայնագրերից

Ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կնքված հետգնման պայմանագրերից ստացված տոկոսների հարաբերակցությունը տարեսկզբից իրականացված ռեպո համաձայնագրերին:

Տոկոսային եկամուտի և եկամտաբեր ակտիվների հարաբերակցությունը

Բանկի կողմից ստացված տարեկանացված տոկոսային եկամուտի հարաբերակցությունը բանկի տարեսկզբից միջին եկամտաբեր ակտիվների մեծությանը:

Ավանդների դիմաց վճարված տոկոսներ

Բանկային հաշիվների, ցպահանջ և ժամկետային ավանդների դիմաց վճարված տարեկանացված տոկոսների հարաբերակցությունը տարեսկզբից իրավաբանական անձանց և հիմնարկների, ֆիզիկական անձանց ժամկետային և ցպահանջ ավանդների գումարին:

Ֆինանսական կազմակերպություններին վճարված տոկոսներ

ՀՀ ԿԲ-ից ներգրաված միջոցների դիմաց վճարված տոկոսների, որոնք գտված են հետզման ապամանագրերի դիմաց վճարված տոկոսների գումարի չափով, թղթակցային հաշիվների, բանկային և այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրաված միջոցների, օվերդրաֆտի, օվերնայթի դիմաց վճարված տոկոսների հարաբերակցությունը տարեսկզբից ԿԲ-ի նկատմամբ բանկի ունեցած պարտավորությունների, ծախսատար թղթակցային հաշիվների և բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների գումարին:

Ուեպո համաձայնագրերի դիմաց վճարված տոկոսներ

Ուեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կնքված հետզման ապամանագրերի գծով պարտավորությունների դիմաց վճարված տոկոսների հարաբերակցությունը տարեսկզբից ռեպո գործառնությունների արդյունքում ներգրաված միջոցների գումարին:

Վճարված տոկոսների և ծախսատար պարտավորությունների հարաբերակցությունը

Բանկի կողմից վճարված տարեկանացված տոկոսների հարաբերակցությունը տարեսկզբից բանկի ունեցած ծախսատար պարտավորությունների մեծությամբ:

Գլուխ 4

ՀԱՇՎԵԿՇՈՒՄՆԵՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Այս գլխում ներկայացվում են եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի ակտիվները, պարտավորությունները և կապիտալը, հիմք ընդունելով դրանց եկամտաբերությունը և ծախսատարությունը, որը հնարավորություն է տալիս համեմատել բանկի ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի փոփոխությունը: Ընդ որում, այստեղ նաև հաշվարկվում են ակտիվների և պարտավորությունների առանձին հաշիվների տարեկան տոկոսային փոփոխությունները: Տարեկան փոփոխությունները հաշվարկվում են որպես նախորդ տարվա և հաշվետու տարվա նույն եռամսյակի ընթացքում ակտիվների և պարտավորությունների տոկոսային փոփոխություն: Իսկ եռամսյակային փոփոխությունները հաշվարկվում են որպես նույն տարվա իրար հաջորդող եռամսյակների տոկոսային փոփոխություն: Այս էջի տվյալները լրացվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 8 հաշվետվությունից:

Գլուխ 5

ՀԱՇՎԵԿՇՈՒՄՆԵՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ

Այս գլխում հաշվարկվում է 4-րդ գլխում ներկայացված ակտիվների, պարտավորությունների և կապիտալի տարրերի տեսակարար կշիռը եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի ընդհանուր ակտիվների գումարում:

Գլուխ 6

ՀԵՏՀԱՇՎԵԿՇԻՈՒ

Այս գլխի առաջին մասում արտացոլված են բանկի կողմից իրականացված հետհաշվեկշռային գործառնությունների բացարձակ մեծությունները: Իսկ երկրորդ մասում հաշվառվում են այդ գործառնությունները որպես տոկոս ընդհանուր ակտիվներից, ընդ որում այստեղ ընդհանուր ակտիվներ են համարվում եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի ընդհանուր ակտիվների գումարը՝ զտված ռեպո համաձայնագրերի գծով բանկի ունեցած պարտավորությունների չափով:

Ստացված երաշխավորություններ

Այս հոդվածում լրացվում են բանկի կողմից ստացված վարկային և այլ երաշխավորությունները ՀՀ դրամով, փոխարկելի ու ոչ փոխարկելի արտարժույթով:

Ստացված գրավ

Այստեղ ներառվում են բանկի կողմից որպես գրավ ստացված պետական արժեթղթերը, այլ արժեթղթերը, թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորները, թանկարժեք զարդերը, ոսկու ջարդոն և թանկարժեք քարեր, անշարժ գույքը և այլ հիմնական միջոցները, պատրաստի արտադրանքը և սպրանքները, դրամական միջոցները, այլ գրավ:

Հաշվեկշռից դուրս գրված վարկեր

Լրացվում է հաշվային պլանի «ծախսերով դուրս գրված վարկեր» հաշվի տվյալներից, ընդ որում ներառում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով վարկերը:

Հաշվեկշռից դուրս գրված տոկոսներ վարկերից

Լրացվում է հաշվային պլանի «Դուրս գրված տոկոսներ վարկերից» հաշվի տվյալներից, ինչպես դրամով, այնպես էլ փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով:

Հաշվեկշռից դուրս գրված դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ

Այստեղ ներառվում են ծախսերով դուրս գրված դեբիտորական պարտքերը, այլ ակտիվները և գլխավոր պահուստի միջոցներից դուրս գրված ակտիվները՝ ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով:

Հաշվեկշռից դուրս գրված արժեթղթեր

Այստեղ ներառվում են ծախսերով դուրս գրված արժեթղթերը՝ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթներով արտահայտված նոմինալով:

Տրամադրված երաշխավորություններ

Այստեղ ներառվում են բանկի կողմից տրամադրած ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթներով վարկային և այլ երաշխավորությունները, վարկային երաշխավորությունները բանկի հետ կապված անձանց գծով և այլ երաշխավորությունները բանկի հետ կապված անձանց գծով:

Տրամադրված գրավներ

Բանկի կողմից տրամադրած ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով գրավները, ներառյալ՝ պետական արժեթղթերը, այլ արժեթղթերը, անշարժ գույք և այլ հիմնական միջոցներ, դրամական միջոցներ և այլն:

Ֆյուչերսային ածանցյալ գործիքներ

Բանկի կողմից կնքած ֆյուչերսային գործարքները՝ ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով:

Ֆորվարդային ածանցյալ գործիքներ

Բանկի կողմից կնքած ֆորվարդային գործարքները՝ ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով:

Օպցիոններ

Բանկի կողմից կնքած օպցիոնները՝ ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով:

Սվոպ ածանցյալ գործիքներ

Բանկի կողմից կնքած սվոպ գործարքները՝ ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով:

Այլ ածանցյալ գործիքներ

Բանկի կողմից կնքած այլ ածանցյալ գործարքները՝ ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով:

Վարկային գծերի չօգտագործված մասը

Այս հոդվածում հաշվառվում են բանկի կողմից տրամադրած ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով վարկային գծերի չօգտագործված մասը:

Վարկային քարտերի չօգտագործված մասը

Բանկի ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով վարկային քարտերի չօգտագործված մասը: Լրացվում է համաձայն հաշվային պլանի համապատասխան հետհաշվեկշռային հաշվի տվյալների:

Օվերդրաֆտների չօգտագործված մասը

Բանկի կողմից տրամադրած ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով օվերդրաֆտների չօգտագործված մասը: Լրացվում է համաձայն հաշվային պլանի համապատասխան հետհաշվեկշռային հաշվի տվյալների:

Ակրեդիտիվներ

Բանկի կողմից բացված ակրեդիտիվներ՝ ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով:

Տոկոս ընդհանուր ակտիվներից

Ստացված երաշխավորություններ

Բանկի կողմից ստացված վարկային և այլ երաշխավորությունների հարաբերակցությունը բանկի ընդհանուր ակտիվներին:

Ստացված գրավ

Բանկի կողմից ստացված գրավի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Հաշվեկշռից դուրս գրված վարկեր

Բանկի անհուսալի ճանաչված վարկերի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Հաշվեկշռից դուրս գրված տոկոսներ վարկերից

Անհուսալի ճանաչված վարկերից ստացվելիք տոկոսների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Հաշվեկշռից դուրս գրված դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ

Հաշվեկշռից դուրս գրված դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հարաբերակցությունը բանկի ընդհանուր ակտիվներին:

Հաշվեկշռից դուրս գրված արժեթղթեր

Հաշվեկշռից դուրս գրված արժեթղթերի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Տրամադրված երաշխավորություններ

Բանկի կողմից տրամադրված վարկային և այլ երաշխավորությունների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Տրամադրված գրավներ

Բանկի կողմից տրամադրված գրավների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Ֆյուչերսային ածանցյալ գործիքներ

Բանկի կողմից կնքած ֆյուչերսային գործարքների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Ֆորվարդային ածանցյալ գործիքներ

Բանկի կողմից կնքած ֆորվարդային գործարքների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Օպցիոններ

Բանկի կողմից կնքած օպցիոնների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Սվոպ ածանցյալ գործիքներ

Բանկի կողմից կնքած սվոպ գործարքների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Այլ ածանցյալ գործիքներ

Բանկի կողմից կնքած այլ ածանցյալ գործարքների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Վարկային գծերի չօգտագործված մասը

Բանկի կողմից տրամադրված վարկային գծերի չօգտագործված մասի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Վարկային քարտերի չօգտագործված մասը

Վարկային քարտերի չօգտագործված մասի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Օվերդրաֆտների չօգտագործված մասը

Բանկի կողմից տրամադրած օվերդրաֆտների չօգտագործված մասի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը :

Ակրեդիտիվներ

Բանկի կողմից բացված ակրեդիտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Գլուխ 7

ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այս գլուխը լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6 հաշվետվության տվյալներին համապատասխան և ներառում է եռամսյակի վերջին օրվա դրությամբ տեղաբաշխված ակտիվների վերլուծությունը ըստ ժամկետայնության և ճյուղային պատկանելիության:

Ժամկետային ակտիվներ

Այստեղ ներառվում են բանկի կողմից տրամադրված վարկերը, միջբանկային վարկերը և ավանդները, ֆակտորինգը, լիզինգը, ռեպո համաձայնագրերը ըստ պայմանագրային ժամկետների՝ մինչև 90 օր, 91-ից մինչև 180 օր, 181-ից մինչև 270 օր, 271-ից մինչև 1 տարի և 1 տարուց ավելի մարման ժամկետով:

Երկարաձգված ակտիվներ

Այստեղ ներառվում են բանկի վարկերը, միջբանկային վարկերը և ավանդները, ֆակտորինգը, լիզինգը, ռեպո համաձայնագրերը ըստ փաստացի երկարաձգված օրերի՝ մինչև 90 օր, 91-ից մինչև 180 օր, 181-ից մինչև 270 օր, 271-ից մինչև 1 տարի և 1 տարուց ավելի ժամկետով:

Ժամկետանց ակտիվներ

Բանկի ժամկետանց վարկերը, միջբանկային վարկերը և ավանդները, ֆակտորինգը, լիզինգը, ռեպո համաձայնագրերը ըստ ժամկետանց և փաստացի երկարաձգված օրերի հանրագումարի՝ մինչև 90 օր, 91-ից մինչև 180 օր, 181-ից մինչև 270 օր:

Ակտիվների դասակարգումը ըստ ճյուղերի

Այստեղ լրացվում են եռամսյակի վերջին օրվա դրությամբ ռեզիդենտներին տրամադրված վարկեր, միջբանկային վարկեր և ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր ըստ պարտապանի ճյուղային պատկանելիության: Լրացվում է ՀՀ ԿԲ ներկայացվող ձև թիվ 6 հաշվետվության I էջի տվյալներին համապատասխան:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված ակտիվներ

Եռամսյակի վերջին օրվա դրությամբ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկեր, միջբանկային վարկեր և ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր: Լրացվում է ՀՀ ԿԲ ներկայացվող ձև թիվ 6 հաշվետվության I էջի տվյալներին համապատասխան:

Բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրված փոխառությունների քանակը

Լրացվում է ՀՀ ԿԲ ներկայացվող ձև թիվ 3 հաշվետվության 4 էջի տվյալներին համապատասխան

Բանկի հետ կապված անձանց տրված փոխառությունների հանրագումար

Լրացվում է ՀՀ ԿԲ ներկայացվող ձև թիվ 3 հաշվետվության 4 էջի տվյալներին համապատասխան

Խոշոր փոխառությունների քանակը

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող ձև թիվ 14 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Խոշոր փոխառությունների հանրագումար

Լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող ձև թիվ 14 հաշվետվության տվյալներին համապատասխան:

Տրված երաշխավորություններ

Այստեղ ներառվում են բանկի կողմից տրամադրած ՀՀ դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթներով վարկային և այլ երաշխավորությունները:

Գլուխ 8

ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այս գլխի առաջին մասում հաշվառվում է եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի դրամով և արտարժույթով արտահայտված ժամկետային, երկարաձգված, ժամկետանց ակտիվների հարաբերակցությունը եռամսյակի վերջին օրվա դրությամբ դրամով և արտարժույթով ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին: Երկրորդ մասում հաշվառվում է եռամսյակի վերջին օրվա դրությամբ ըստ ճյուղային պատկանելիության ռեզիդենտներին տեղաբաշխված ակտիվների հարաբերակցությունը եռամսյակի վերջին օրվա դրությամբ դրամով և արտարժույթով ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին: Տվյալները վերցվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6 հաշվետվությունից:

1. Ժամկետային ակտիվներ

Դրամով և արտարժույթով բանկի ընդհանուր ժամկետային ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին:

- 1.1 մինչև 90 օր մարման ժամկետով ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին,
- 1.2 91-180 օր մարման ժամկետով ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին,
- 1.3 181-270 օր մարման ժամկետով ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին
- 1.4 271-1տարի մարման ժամկետով ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին,
- 1.5 1 տարուց ավելի մարման ժամկետով ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին:

2. Երկարաձգված ակտիվներ

Այստեղ հաշվառվում է բանկի դրամային և արտարժութային երկարաձգված ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին:

2.1 մինչև 90 օր երկարաձգված ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին,

2.2 91-180 օր երկարաձգված ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին,

2.3 181-270 օր երկարաձգված ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին,

2.4 271-1 տարի երկարաձգված ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին,

2.5 1 տարուց ավելի երկարաձգված ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին:

3. Ժամկետանց ակտիվներ

Բանկի դրամային և արտարժութային ժամկետանց ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին:

3.1 մինչև 90 օր ժամկետանց ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին,

3.2 91-180 օր ժամկետանց ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին,

3.3 181-270 օր ժամկետանց ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին:

Ռեզիդենտներին տրամադրված ակտիվներ

Ռեզիդենտներին տրված դրամով և արտարժույթով վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին, այդ թվում եռամսյակի վերջին օրվա դրությամբ տնտեսության առանձին ճյուղերում տեղաբաշխված վարկերի, ավանդների, ֆակտորինգի, լիզինգի հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին (օրինակ՝ արդյունաբերության ոլորտում ռեզիդենտներին տեղաբաշխված վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին, և այլն):

Ոչ ռեզիդենտներին տրամադրված ակտիվներ

Ոչ ռեզիդենտներին տրված վարկերի, ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարի հարաբերակցությունը ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին:

Բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրված փոխառություններ

Բանկի հետ կապված անձանց տրամադրած փոխառությունների գումարի հարաբերակցությունը բանկի կողմից տրված ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 3 հաշվետվությունից:

Խոշոր փոխառությունների հանրագումար

Այստեղ հաշվառվում է խոշոր փոխառություններին տրամադրած փոխառությունների հարաբերակցությունը բանկի կողմից տրված ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 14 հաշվետվությունից:

Տրված երաշխավորություններ և երաշխիքներ

Դրամով, փոխարկելի և ոչ փոխարկելի արտարժույթով տրված երաշխավորությունների և երաշխիքների գումարի հարաբերակցությունը բանկի կողմից տրված ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին, այդ թվում, առանձին հաշվառվում են բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին և խոշոր վարկառուներին տրամադրած երաշխավորությունների և երաշխիքների հարաբերակցությունը բանկի կողմից տրված ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին:

Գլուխ 9

ՉԱՇԽԱՏՈՂ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ

Այս գլուխը լրացվում է բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6 հաշվետվության տվյալներին համապատասխան և ներառում է եռամսյակի վերջին օրվա դրությամբ չաշխատող և հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվների ճյուղային պատկանելիությունը: Չաշխատող և հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվների սահմանումը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» դրույթներին:

Ուեզիդենտների չաշխատող ակտիվներ

Այստեղ ներառվում են ռեզիդենտների չաշխատող վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի ընդհանուր գումարը և դրա բաշխվածությունը տնտեսության տարբեր ճյուղերի միջև՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ և կապ, առևտուր, հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, ֆինանսական սեկտոր, սպառողական վարկեր, այլ ճյուղեր:

Ոչ ռեզիդենտների չաշխատող ակտիվներ

Ոչ ռեզիդենտներին տրամադրած չաշխատող վարկերը, միջբանկային վարկեր և ավանդները, ֆակտորինգը և լիզինգը:

Ընդամենը չաշխատող ակտիվներ

Եռամսյակի վերջին օրվա դրությամբ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների չաշխատող ակտիվների գումարը:

Ուեզիդենտների դուրս գրված ակտիվների մնացորդ

Այստեղ ներառվում են ռեզիդենտների դուրս գրված վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի մնացորդը եռամսյակի վերջին օրվա դրությամբ, ըստ պարտապանի ճյուղային պատկանելիության:

Ոչ ռեզիդենտների դուրս գրված ակտիվների մնացորդ

Եռամսյակի վերջին օրվա դրությամբ ոչ ռեզիդենտների դուրս գրված վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի մնացորդները:

Ընդամենը դուրս գրված ակտիվների մնացորդ

Ուեզիդենտների և ոչ ռեզիդենտների դուրս գրված ակտիվների մնացորդը եռամսյակի վերջին օրվա դրությամբ:

Գլուխ 10

ՉԱՇԽԱՏՈՂ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Այս գլխում հաշվառվում է եռամսյակի վերջին օրվա դրությամբ տնտեսության տարբեր ճյուղերի գծով ռեզիդենտների չաշխատող և հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվների հարաբերակցությունը տվյալ ճյուղի գծով ռեզիդենտ փոխառուներին տրամադրած ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին: Տվյալները վերցվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6 հաշվետվությունից:

Ռեզիդենտների չաշխատող ակտիվներ

Ռեզիդենտների չաշխատող ակտիվների հարաբերակցությունը ռեզիդենտներին տեղաբաշխված ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին: Այդ թվում այստեղ առանձին տողերով հաշվառվում է տնտեսության տարբեր ճյուղերի (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ և կապ, առևտուր, հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, ֆինանսական սեկտոր, սպառողական վարկեր, այլ ճյուղեր) գծով չաշխատող ակտիվների հարաբերակցությունը այդ ճյուղին տրամադրած ընդհանուր վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի գումարին:

Ոչ ռեզիդենտների չաշխատող ակտիվներ

Եռամսյակի վերջին օրվա դրությամբ ոչ ռեզիդենտների չաշխատող ակտիվների հարաբերակցությունը եռամսյակի վերջին օրվա դրությամբ ոչ ռեզիդենտներին տեղաբաշխված վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի ընդհանուր գումարին:

Ընդամենը չաշխատող ակտիվներ

Բանկի եռամսյակի վերջին օրվա դրությամբ ընդհանուր չաշխատող ակտիվների գումարի հարաբերակցությունը ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տեղաբաշխված վարկերի, միջբանկային վարկերի և ավանդների, ֆակտորինգի, լիզինգի ընդհանուր գումարին:

Նույն հարաբերակցությունները հաշվարկվում են նաև հետահաշվեկշիռ դուրս գրված ակտիվների գծով՝ ըստ ճյուղային պատկանելիության:

Գլուխ 11

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Այս գլխի առաջին մասը ներառում է եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի դասակարգված վարկերի, դեբիտորական պարտքերի, հետհաշվեկշռային հոդվածների, ինվեստիցիոն արժեթղթերի մեծությունը: Ակտիվների դասակարգումը տրված է համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգերի:

Երկրորդ մասում հաշվարկվում է դասակարգված վարկերի, դեբիտորական պարտքերի, հետհաշվեկշռային հոդվածների և ինվեստիցիոն արժեթղթերի հարաբերակցությունը եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի ընդհանուր ակտիվների գումարին: Սույն հարաբերակցությունը հաշվարկվում է նաև դասակարգված ակտիվների առանձին դասերի համար՝ ստանդարտ, ոչ ստանդարտ, հսկվող, կասկածելի վարկերի, դեբիտորական պարտքերի, հետհաշվեկշռային հոդվածների և ոչ ռիսկային, ռիսկային, միջին ռիսկային, բարձր ռիսկային, անհուսալի, անժամկետ դասակարգված ինվեստիցիոն արժեթղթերի համար:

Գլուխ 12

ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՄՏԻ ՊԱՀՈՒՄՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Այս գլխի առաջին մասում հաշվարկվում է վարկերի, դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների պահուստի փոփոխությունը եռամսյակի ընթացքում: Վարկերի, դեբիտորական պարտքերի գծով պահուստների ձևավորումը, դրանց դիմաց հաշվարկվող պահուստների չափը որոշվում է համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին»:

Պահուստի մնացորդը եռամսյակի սկզբին

Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ծածկման պահուստի մնացորդը եռամսյակի սկզբին: Տվյալները վերցվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6 հաշվետվությունից:

Հետհաշվեկշիռ դուրսգրումները

Եռամսյակի ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված վարկերը և դեբիտորական պարտքերը: Տվյալները վերցվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 12 հաշվետվությունից:

Հատկացումներ պահուստին

Եռամսյակային հատկացումներ վարկերի և դեբիտորական պարտքերի պահուստին: Տվյալները վերցվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 5 հաշվետվությունից:

Հետհաշվեկշիռ դուրս չգրված ակտիվների վերադարձ

Եռամսյակային վերադարձներ դասակարգված բայց դեռևս դուրս չգրված ակտիվների գծով: Տվյալները վերցվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 5 հաշվետվությունից:

Պահուստի այլ փոփոխություններ

Այստեղ ներառված են պահուստի այն փոփոխությունները, որոնք չեն նկարագրվել նախորդ հոդվածներում:

Պահուստի վերջնական մնացորդը

Տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կորուստների ծածկման պահուստի մնացորդը եռամսյակի վերջում: Տվյալները վերցվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6 հաշվետվությունից:

Հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվների վերադարձ

Եռամսյակի ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված վարկերի և դեբիտորական պարտքերի մարում: Տվյալները վերցվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 12 հաշվետվությունից:

Ձուտ կորուստներ

Այս ցուցանիշը հաշվարկվում է որպես եռամսյակի ընթացքում վարկերի և դեբիտորարական պարտքերի գծով պահուստին կատարված հատկացումների և դասակարգված բայց դեռևս դուրս չգրված և հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվների վերադարձի տարբերություն:

Միջին եռամսյակային վարկային ներդրումներ և դեբիտորական պարտքեր

Բանկի եռամսյակային միջին վարկային ներդրումները և դեբիտորական պարտքերը: Տվյալները վերցվում են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 6 հաշվետվությունից:

Միջին եռամսյակային ընդհանուր ակտիվներ

Բանկի եռամսյակային միջին ընդհանուր ակտիվները:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ձուտ կորուստներ / միջին ակտիվներ

Եռամսյակի ընթացքում զուտ կորուստների (հաշվարկված է տվյալ էջի առաջին մասում) և եռամսյակային միջին ակտիվների հարաբերակցությունը:

Ձուտ կորուստներ / միջին վարկեր և դեբիտորական պարտքեր

Եռամսյակի ընթացքում զուտ կորուստների և եռամսյակային միջին վարկային ներդրումների և դեբիտորական պարտքերի հարաբերակցությունը:

Հատկացումներ պահուստին / միջին ակտիվներ

Վարկերի և դեբիտորական պարտքերի պահուստին կատարված եռամսյակային հատկացումների հարաբերակցությունը եռամսյակային միջին ակտիվների գումարին:

Հատկացումներ պահուստաֆոնդին / միջին վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերի և դեբիտորական պարտքերի պահուստին կատարված եռամսյակային հատկացումների և եռամսյակային միջին վարկային ներդրումների և դեբիտորական պարտքերի հարաբերակցությունը:

Վերադարձներ / միջին ակտիվներ

Դասակարգված ակտիվների գծով եռամսյակային վերադարձների գումարի հարաբերակցությունը եռամսյակային միջին ակտիվների մեծությանը:

Վերադարձներ / միջին վարկեր և դեբիտորական պարտքեր

Դասակարգված ակտիվների գծով եռամսյակային վերադարձների գումարի հարաբերակցությունը եռամսյակային միջին վարկային ներդրումների և դեբիտորական պարտքերի գումարին:

Պահուստի մնացորդը եռամսյակի վերջին / միջին ակտիվներ

Եռամսյակի վերջի օրվա դրությամբ տված վարկերի և դեբիտորական պարտքերի կորուստների ծածկման պահուստի մնացորդի և եռամսյակային միջին ակտիվների գումարի հարաբերակցությունը:

Պահուստի մնացորդը եռամսյակի վերջին / միջին վարկեր և դեբիտորական պարտքեր

Եռամսյակի վերջի օրվա դրությամբ տված վարկերի և դեբիտորական պարտքերի կորուստների ծածկման պահուստի մնացորդի և եռամսյակային միջին վարկային ներդրումների և դեբիտորական պարտքերի գումարի հարաբերակցությունը:

Պահուստի մնացորդը եռամսյակի վերջին / չաշխատող ակտիվներ

Եռամսյակի վերջի օրվա դրությամբ տված վարկերի և դեբիտորական պարտքերի կորուստների ծածկման պահուստի մնացորդի և եռամսյակի վերջին օրվա դրությամբ հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի, անհուսալի դասակարգված վարկերի և դեբիտորական պարտքերի գումարի հարաբերակցությունը:

Պահուստի մնացորդը եռամսյակի վերջին / զուտ կորուստներ

Եռամսյակի վերջի օրվա դրությամբ տված վարկերի և դեբիտորական պարտքերի կորուստների ծածկման պահուստի մնացորդի և եռամսյակի ընթացքում զուտ կորուստների գումարի հարաբերակցությունը:

Հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ / միջին ակտիվներ

Եռամսյակի ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված վարկերի և դեբիտորական պարտքերի գումարի հարաբերակցությունը եռամսյակային միջին ակտիվների գումարին:

Հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվների վերադարձ / միջին ակտիվներ

Եռամսյակի ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված վարկերի և դեբիտորական պարտքերի մարումների հարաբերակցությունը եռամսյակային միջին ակտիվների գումարին:

Դուրս գրված ակտիվների վերադարձ / նախորդ ժամանակաշրջանի դուրս գրված ակտիվներ

Եռամսյակի ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված վարկերի և դեբիտորական պարտքերի վերադարձի և նախորդ ժամանակաշրջանի արտահաշվեկշիռ դուրս գրված վարկերի և դեբիտորական պարտքերի վերադարձի հարաբերակցությունը:

Զուտ կորուստների ծածկույթը գործառնական եկամուտներով

Տրված վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ծածկման գծով պահուստի մնացորդի և բանկի եռամսյակային գործառնական եկամուտների գումարի հարաբերակցությունը բանկի եռամսյակային զուտ կորուստների գումարին:

Գլուխ 13

ԻՐԱՏՎԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊՈՐՏՖԵԼ

Այս գլխում հաշվառվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բանկի բարձր իրացվելի ակտիվները, ցպահանջ պարտավորությունները, դրանց տեսակարար կշիռը բանկի ընդհանուր ակտիվներում և արժեթղթերի տարբեր տեսակների մեծությունը և դրանց տեսակարար կշիռը ընդհանուր արժեթղթերի պորտֆելում:

Բարձր իրացվելի ակտիվներ

Բանկի բարձր իրացվելի ակտիվների հանրագումարը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 3 հաշվետվությունից:

Կարճաժամկետ ակտիվներ

Այստեղ ներառվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բանկի կարճաժամկետ ակտիվների գումարը՝ բանկի ցպահանջ և մինչև 30 օր, 30-60 օր, 61-90 օր, 91-120 օր, 121-150 օր, 151-180 օր, 181 – 1 տարի մարման ժամկետ ունեցող ակտիվները, որոնք գտվում են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով առաջացած ցպահանջ, մինչև 30 օր, 30-60 օր, 61-90 օր, 91-120 օր, 121-150 օր, 151-180 օր, 181 – 1 տարի մարման ժամկետ ունեցող պարտավորությունների գումարի չափով: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 9 հաշվետվությունից:

Ցպահանջ պարտավորություններ

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բանկի ցպահանջ պարտավորությունների գումարը: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 3 հաշվետվությունից:

Կարճաժամկետ պարտավորություններ

Այստեղ ներառվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բանկի կարճաժամկետ պարտավորությունների գումարը՝ բանկի ժամկետանց, ցպահանջ և մինչև 30 օր, 30-60 օր, 61-90 օր, 91-120 օր, 121-150 օր, 151-180 օր, 181 – 1 տարի մարման ժամկետ ունեցող պարտավորությունները, որոնք գտվում են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով առաջացած ժամկետանց, ցպահանջ, մինչև 30 օր, 30-60 օր, 61-90 օր, 91-120 օր, 121-150 օր, 151-180 օր, 181 – 1 տարի մարման ժամկետ ունեցող պարտավորությունների գումարի չափով: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 9 հաշվետվությունից:

Պետական արժեթղթեր

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բանկի կողմից պետական արժեթղթերում կատարած ներդրումների մեծությունը:

Փայամասնակցություն և կորպորատիվ արժեթղթեր

Այստեղ ընդգրկվում են բանկի ներդրումները առևտրային նպատակներով և վաճառքի համար նախատեսված ՀՀ և այլ երկրների ոչ պետական արժեթղթերում՝ արտոնյալ և սովորական բաժնետոմսերում ներդրումների և այլ փայամասնակցությունների ձևով, ներդրումները այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում և համատեղ վերահսկվող միավորներում ներդրումների արժեգրկման պահուստը:

Այլ արժեթղթեր

Այստեղ ընդգրկվում են բանկի ներդրումները առևտրային նպատակներով պահվող և վաճառքի համար նախատեսված ՀՀ և այլ երկրների ոչ պետական տոկոսային և առանց տոկոսի արժեթղթերում, ոչ պետական արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվը, մինչև մարման ժամկետը պահվող ՀՀ և այլ երկրների ոչ պետական արժեթղթերում, բացառությամբ ՀՀ և այլ երկրների ոչ պետական արժեթղթերից ստացվելիք տոկոսներ հաշվի մնացորդը, ինչպես նաև մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեգրկման պահուստը, ռեպո համաձայնագրերով ՀՀ կենտրոնական բանկին, ռեզիդենտ բանկերին, ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններին, այլ ռեզիդենտներին, ոչ ռեզիդենտներին վաճառված այլ արժեթղթերը, ՀՀ կենտրոնական բանկից, ռեզիդենտ բանկերից, ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններից, այլ ռեզիդենտներից, ոչ ռեզիդենտներից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված այլ արժեթղթերը:

ՏՈԿՈՍ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ

Այս բաժնում վերը նշված ցուցանիշները հարաբերվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բանկի ընդհանուր ակտիվներին:

ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Կախվածություն գույք գպահանջ պարտավորություններից

Այս գործակիցը հաշվառվում է որպես բանկի հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ցպահանջ պարտավորությունների և բարձր իրացվելի ակտիվների տարբերության հարաբերակցությունը ժամկետային ակտիվների գումարին:

$$(M_{\text{ցպ}} - U_{\text{բի}}) / U_{\text{ժամկ}}$$

Ընդ որում, ժամկետային ակտիվների կազմում ընդգրկվում են բանկի 1-3 տարի և 3 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվները, որոնց գումարը գտվում է ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով առաջացած 1-3 տարի և 3 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող պարտավորությունների գումարի չափով:

Ընթացիկ իրացվելիություն

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցությունը:

Կարճաժամկետ ակտիվներ / կարճաժամկետ պարտավորություններ

Բանկի վերը նկարագրված կարճաժամկետ ակտիվների և կարճաժամկետ պարտավորությունների հարաբերակցությունը:

Չուտ կարճաժամկետ պարտավորություններ / ընդհանուր ակտիվներ

Կարճաժամկետ պարտավորությունների և կարճաժամկետ ակտիվների տարբերության հարաբերակցությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ընդհանուր ակտիվների գումարի մեծությամբ:

Չուտ վարկեր և դեբիտորական պարտքեր / ընդհանուր պարտավորություններ

Վարկային ներդրումների և դեբիտորական պարտքերի գումարի և վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ծածկման պահուստի տարբերության հարաբերակցությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ընդհանուր պարտավորությունների գումարի մեծությամբ:

Չուտ վարկեր և դեբիտորական պարտքեր / ժամկետային պարտավորություններ

Վարկային ներդրումների և դեբիտորական պարտքերի գումարի և վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ծածկման պահուստի տարբերության հարաբերակցությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ժամկետային պարտավորությունների գումարին: Ընդ որում ժամկետային պարտավորությունների հաշվարկում ընդգրկվում են 1-3 տարի և 3 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող պարտավորությունները, որոնց գումարից գտվում են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով առաջացած 1-3 տարի և 3 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող պարտավորությունները:

Չուտ վարկեր և դեբիտորական պարտքեր / ընդհանուր ակտիվներ

Վարկային ներդրումների և դեբիտորական պարտքերի գումարի և վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ծածկման պահուստի տարբերության հարաբերակցությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ բանկի ընդհանուր ակտիվների գումարին:

ԱՐԺԵԹՎԹԵՐԻ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Այս բաժնում հաշվառվում են տարբեր տեսակի արժեթղթերի տեսակարար կշիռը ընդհանուր արժեթղթերի պորտֆելում:

Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր

Այստեղ հաշվառվում են մինչև մարման ժամկետը պահվող ՀՀ և այլ երկրների պետական և ոչ պետական արժեթղթերի և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեգրկման պահուստի հարաբերակցությունը ընդհանուր արժեթղթերի պորտֆելին: Ընդ որում ՀՀ և այլ երկրների պետական և ոչ պետական արժեթղթերի հաշվարկից գտվում են այդ արժեթղթերի գծով ստացվող տոկոսները:

Բացի դրանից առանձին հոդվածներով հաշվառվում են պետական և ոչ պետական արժեթղթերում ներդրումների հարաբերակցությունը ընդհանուր արժեթղթերի պորտֆելին:

Ներդրումներ այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում

Բանկի այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում կատարված ներդրումների և այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում և համատեղ վերահսկվող միավորներում ներդրումների արժեզրկման պահուստի հարաբերակցությունը արժեթղթերի ընդհանուր պորտֆելին: Առանձին հոդվածներով հաշվառվում են դուստր ընկերություններում, ասոցիացված կազմակերպություններում, համատեղ վերահսկվող միավորումներում ներդրումների հարաբերակցությունը արժեթղթերի ընդհանուր պորտֆելին:

Վաճառքի համար մատչելի արժեթղթեր

Այստեղ հաշվառվում են վաճառքի համար մատչելի ՀՀ և այլ երկրների պետական և ոչ պետական արժեթղթերի հարաբերակցությունը արժեթղթերի ընդհանուր պորտֆելին: Ընդ որում ՀՀ և այլ երկրների պետական և ոչ պետական արժեթղթերի հաշվարկից գտվում են այդ արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսները և ոչ պետական արժեթղթերի գծով ստացվելիք շահաբաժինները:

Առևտրական նպատակներով պահվող արժեթղթեր

Այստեղ հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ՀՀ և այլ երկրների պետական և ոչ պետական արժեթղթերի և ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի հարաբերակցությունը արժեթղթերի ընդհանուր պորտֆելին: Ընդ որում ՀՀ և այլ երկրների պետական և ոչ պետական արժեթղթերի հաշվարկից գտվում են այդ արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսները և ոչ պետական արժեթղթերի գծով ստացվելիք շահաբաժինները:

Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր

Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի հարաբերակցությունը ընդհանուր արժեթղթերի պորտֆելին:

Գլուխ 14

ԿԱՊԻՏԱԼԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում ներառվում է բանկի ընդհանուր կապիտալի վերլուծությունը եռամսյակի վերջին օրվա դրությամբ և բանկի միջին ամսական ռիսկով կշռված ակտիվների մեծությունը: Բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկը կատարվում է համաձայն «ՀՀ ԿԲ կանոնակարգ 2-ով» սահմանված կարգով: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 11 հաշվետվությունից:

Ընդհանուր կապիտալ

Եռամսյակի վերջին օրվա դրությամբ ընդհանուր կապիտալի մեծությունը:

Ընդամենը հիմնական կապիտալ

Եռամսյակի վերջին օրվա դրությամբ հիմնական կապիտալի մեծությունը, ընդ որում առանձին հոդվածներով հաշվառվում են հիմնական կապիտալի առանձին տարրերը և դրա հաշվարկից նվազեցվող հոդվածները:

Կանոնադրական հիմնադրամ

Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի մեծությունը եռամսյակի վերջին օրվա դրությամբ, ներառյալ բաժնետոմսերի հավելավճարը:

Գլխավոր պահուստ

Բանկի գլխավոր պահուստի մնացորդը եռամսյակի վերջին օրվա դրությամբ:

Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ

Բանկի գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթ՝ պակասեցված հաշվարկված շահաբաժինների գումարով:

Նախորդ ժամանակաշրջանների շահույթ (վնաս)

Բանկի նախորդ ժամանակաշրջանի գործունեության արդյունքում ստացված շահույթ կամ վնաս և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթի ճշգրտում:

Սուբորդինացված փոխատվություններ

Բանկի երկարաժամկետ ստորադաս փոխատվությունների մնացորդը եռամսյակի վերջին օրվա դրությամբ:

Բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսերը

Բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսերի գումարը:

Ոչ նյութական ակտիվներ

Եռամսյակի վերջին օրվա դրությամբ ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Այլ բանկերի կանոնադրական հիմնադրամում իրականացված ներդրումներ

Եռամսյակի վերջին օրվա դրությամբ այլ բանկերի կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների գումարի չափը:

Չօգտագործվող նյութական ակտիվներ

Բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Օգտագործվող նյութական ակտիվներ

Բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումարի չափով:

Ընդամենը լրացուցիչ կապիտալ

Եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի լրացուցիչ կապիտալի մեծությունը: Այստեղ առանձին հոդվածներով հաշվառվում են լրացուցիչ կապիտալի տարրերը՝

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի մնացորդը եռամսյակի վերջին օրվա դրությամբ:

Միավորման արդյունքում արտարժույթային պահուստներ

Հաշվեկշռի միավորման ընթացքում առաջացած արտարժույթային տարբերությունների պահուստի մնացորդը եռամսյակի վերջին օրվա դրությամբ:

Այլ պահուստներ

Բանկի գործունեության արդյունքում ստեղծված այլ պահուստների մնացորդը եռամսյակի վերջին օրվա դրությամբ:

Սուբորդինացված պարտավորություններ

Բանկի երկարաժամկետ ստորադաս փոխառությունների մնացորդը եռամսյակի վերջին օրվա դրությամբ:

Միջին ռիսկով կշռված ակտիվներ

Բանկի միջին ամսեկան ռիսկով կշռված ակտիվները, որոնց հանրագումարը նվազեցվում է հիմնական կապիտալից պակասեցվող գումարի չափով (համաձայն «ՀՀ ԿԲ կանոնակարգ 2-ի»): Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 3 հաշվետվությունից:

Հաշվեկշռային հոդվածներ

Բանկի միջին ամսեկան կտրվածքով ռիսկով կշռված ակտիվների հաշվեկշռային մնացորդը, որի հանրագումարը նվազեցվում է ակտիվների հնարավոր կորուստների պահուստաֆոնդի մնացորդի չափով: Առանձին հոդվածներով այստեղ հաշվառվում են 10%, 20%, 50%, 100% ռիսկի կշիռ ունեցող ակտիվների հաշվեկշռային մնացորդը: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 3 հաշվետվությունից:

Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

Ծախսերի հաշվին ձևավորվող վարկերի, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստների գումարը: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 3 հաշվետվությունից:

Հետհաշվեկշռային հոդվածներ

Բանկի միջին ամսեկան կտրվածքով ռիսկով կշռված ակտիվների հետհաշվեկշռային մնացորդը: Առանձին հոդվածներով այստեղ հաշվառվում են 10%, 20%, 50%, 100% ռիսկի կշիռ ունեցող ակտիվների հետհաշվեկշռային մնացորդը: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 3 հաշվետվությունից:

Հիմնական կապիտալից պակասեցվող գումարներ

«ՀՀ ԿԲ կանոնակարգ 2-ի» պահանջներին համաձայն հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը հաշվարկելիս հիմնական կապիտալից պակասեցվող գումարները: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 3 հաշվետվությունից:

Գլուխ 15

ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Այս գլխում հաշվառվում է բանկի ընդհանուր կապիտալի կազմի մեջ մտնող և պակասեցվող տարրերի փոփոխությունը եռամսյակի ընթացքում: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 11 հաշվետվությունից:

Ընդհանուր կապիտալը ժամանակաշրջանի սկզբում

Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում:

Կանոնադրական հիմնադրամի աճ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կանոնադրական կապիտալի փոփոխությունը, ներառյալ իրացված արժեթղթերի քանակի փոփոխությունը:

Գլխավոր պահուստի աճ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գլխավոր պահուստի փոփոխությունը:

Եկամուտների պահուստի աճ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում չբաշխված շահույթի փոփոխությունը, ներառյալ վճարված շահաբաժինների մակարդակի փոփոխությունը:

Սուբորդինացված փոխատվություններ

Բանկի երկարաժամկետ ստորադաս փոխատվությունների մնացորդի փոփոխությունը եռամսյակի ընթացքում:

Բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսերը

Բանկի կողմից հետ գնված սեփական բաժնետոմսերի գումարի փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

Այլ բանկերի կանոնադրական հիմնադրամում իրականացված ներդրումներ

Այլ բանկերի կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների գումարի չափի փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

Չօգտագործվող նյութական ակտիվներ

Բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

Օգտագործվող նյութական ակտիվներ

Բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի փոփոխությունը՝ հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումարի չափով:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի մնացորդի փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

Միավորման արդյունքում արտարժույթային պահուստներ

Հաշվեկշռի միավորման ընթացքում առաջացած արտարժույթային տարբերությունների պահուստի մնացորդի փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

Այլ պահուստներ

Բանկի գործունեության արդյունքում ստեղծված այլ պահուստների մնացորդի փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

Սուբորդինացված պարտավորություններ

Բանկի երկարաժամկետ ստորադաս փոխառությունների մնացորդի փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

Ընդհանուր կապիտալը ժամանակաշրջանի վերջում

Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱԿԻՅՆԵՐ

Չուտ վարկեր և դեբիտորական պարտքեր

Չուտ վարկերի և դեբիտորական պարտքերի հարաբերակցությունը եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի ընդհանուր կապիտալի մեծությանը:

Սուբորդինացված պարտավորություններ

Բանկի երկարաժամկետ ստորադաս փոխառությունների հարաբերակցությունը եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի ընդհանուր կապիտալի մեծությանը:

Երկարաժամկետ պարտավորություններ

Բանկի երկարաժամկետ պարտավորությունների հարաբերակցությունը եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի ընդհանուր կապիտալի մեծությանը, ընդ որում երկարաժամկետ պարտավորությունների կազմում ընդգրկվում են 1-3 տարի և 3 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող պարտավորությունները, որոնց գումարը գտնվում է ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով առաջացած 1-3 տարի և 3 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող պարտավորությունների գումարի չափով:

Ոչ նյութական ակտիվներ

Բանկի ոչ նյութական ակտիվների հարաբերակցությունը եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի ընդհանուր կապիտալի մեծությանը:

Չուտ շահույթ

Չուտ շահույթի հարաբերակցությունը տարեսկզբից բանկի միջին ընդհանուր կապիտալի գումարին, ընդ որում շահույթի մեծությունը տարեկանացված է՝ օգտագործելով համապատասխան գործակիցներ:

Շահարաժիններ

Հաշվառված շահաբաժինների հարաբերակցությունը տարեսկզբից բանկի միջին ընդհանուր կապիտալի գումարին, ընդ որում շահաբաժինների մեծությունը տարեկանացված է՝ օգտագործելով համապատասխան գործակիցներ:

ԿԱՊԻՏԱԼԻ ԱՅԼ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Շահաբաժիններ / գուտ շահույթ

Հաշվառված շահաբաժինների տեսակարար կշիռը բանկի գուտ շահույթի գումարում (տես՝ 2-րդ գլուխը):

Ընդհանուր կապիտալ / ընդհանուր ակտիվներ

Եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը ընդհանուր ակտիվների գումարին:

ԱՃԻ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ընդհանուր կապիտալ

Այստեղ հաշվառվում է ընդհանուր կապիտալի տարեկան աճը՝ ընդհանուր կապիտալի 12 ամսյա փոփոխությունը հարաբերվում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի դրությամբ ընդհանուր կապիտալի մեծությանը:

Ընդհանուր կապիտալի աճի և ընդհանուր ակտիվների աճի տարբերությունը

Ընդհանուր կապիտալի աճի և ընդհանուր ակտիվների աճի տարբերությունը ներառված է այս բաժնում վերլուծական նպատակներով, ըստ էության այն չի հանդիսանում աճի գործակից:

Հիմնական կապիտալ / ընդհանուր ակտիվներ

Եռամսյակի վերջին օրվա դրությամբ նորմատիվային հիմնական կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության փոփոխությունը եռամսյակի ընթացքում:

Գլուխ 16

ՏՈԿՈՍԱՅԻՆ ՌԻՍԿԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Այս գլխում պարունակվող վերլուծությունը թույլ է տալիս եզրակացություն կատարել տոկոսային ռիսկի նկատմամբ բանկի ակտիվների և պարտավորությունների զգայունության աստիճանի վերաբերյալ: Այստեղ նկարագրվում են բանկի տոկոսադրույքի ռիսկ պարունակող ակտիվների և պարտավորությունների կազմը և դրանց տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվների մեջ: Տվյալների մեծամասնությունը վերցվում է բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 9 հաշվետվությունից:

Վաճառքի և առևտրային նպատակներով պահվող արժեթղթեր

Այստեղ ներառվում են վաճառքի և առևտրային նպատակներով պահվող ՀՀ և այլ երկրների պետական և ոչ պետական արժեթղթերը, ընդ որում ՀՀ և այլ երկրների պետական և ոչ պետական արժեթղթերի հաշվարկից գտվում են այդ արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսները և ոչ պետական արժեթղթերի գծով ստացվելիք շահաբաժինները:

Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր

Այստեղ հաշվառվում են մինչև մարման ժամկետը պահվող ՀՀ և այլ երկրների պետական և ոչ պետական արժեթղթերը և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեգրկման պահուստը, ընդ որում ՀՀ և այլ երկրների պետական և ոչ պետական արժեթղթերի հաշվարկից գտվում են այդ արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսները:

Փոփոխվող տոկոսադրույքներով պարտավորություններ

Բանկի փոփոխվող տոկոսադրույքով արտահայտված պարտավորությունների ընդհանուր գումարը, որտեղ ներառվում են ցպահանջ, մինչև 30 օր, 30 – 60 օր, 60- 90 օր, 90 – 120 օր, 120 – 150 օր, 150 – 180 օր, 180 – 1 տարի, 1 – 3 տարի, 3 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող բոլոր փոփոխվող տոկոսադրույքով պարտավորությունները: Առանձին հոդվածներով հաշվառվում են 180 օրյա, 180 – 1 տարի, 1 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող փոփոխվող տոկոսադրույքով պարտավորությունների մեծությունը: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 9 հաշվետվությունից:

Փոփոխվող տոկոսադրույքով ակտիվներ

Բանկի փոփոխվող տոկոսադրույքով արտահայտված ակտիվների ընդհանուր գումարը, որտեղ ներառվում են ցպահանջ, մինչև 30 օր, 30 – 60 օր, 60- 90 օր, 90 – 120 օր, 120 – 150 օր, 150 – 180 օր, 180 – 1 տարի, 1 – 3 տարի, 3 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող փոփոխվող տոկոսադրույքով բոլոր ակտիվները: Առանձին հոդվածներով հաշվառվում են 180 օրյա, 180 – 1 տարի, 1 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների մեծությունը: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 9 հաշվետվությունից:

Ճեղքվածք փոփոխվող տոկոսադրույքների համար

Հաշվառվում է որպես փոփոխվող տոկոսադրույքներով արտահայտված պարտավորությունների և ակտիվների տարբերություն:

Ֆիքսված տոկոսադրույքով պարտավորություններ

Բանկի ֆիքսված տոկոսադրույքով պարտավորությունների ընդհանուր գումարը, որտեղ ներառվում են ցպահանջ, մինչև 30 օր, 30 – 60 օր, 60- 90 օր, 90 – 120 օր, 120 – 150 օր, 150 – 180 օր, 180 – 1 տարի, 1 – 3 տարի, 3 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող բոլոր ֆիքսված տոկոսադրույքով պարտավորությունները: Առանձին հոդվածներով հաշվառվում են 180 օրյա, 180 – 1 տարի, 1 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող ֆիքսված տոկոսադրույքով պարտավորությունների մեծությունը: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 9 հաշվետվությունից:

Ֆիքսված տոկոսադրույքով ակտիվներ

Բանկի ֆիքսված տոկոսադրույքով ակտիվների ընդհանուր գումարը, որտեղ ներառվում են ցպահանջ, մինչև 30 օր, 30 – 60 օր, 60- 90 օր, 90 – 120 օր, 120 – 150 օր, 150 – 180 օր, 180 – 1 տարի, 1 – 3 տարի, 3 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող բոլոր ֆիքսված տոկոսադրույքով ակտիվները: Առանձին հոդվածներով հաշվառվում են 180 օրյա, 180 – 1 տարի, 1 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող ֆիքսված տոկոսադրույքով ակտիվների մեծությունը: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 9 հաշվետվությունից:

Ճեղքվածքը ֆիքսված տոկոսադրույքների համար

Հաշվառվում է որպես ֆիքսված տոկոսադրույքներով արտահայտված պարտավորությունների և ակտիվների տարբերություն:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՌԻՍԿԻ ՉԱՓԸ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Այս բաժնում վերընշված բոլոր տարրերի մեծությունը հարաբերվում է բանկի ընդհանուր ակտիվների գումարի մեծությանը:

Գլուխ 17

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ և ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Այս գլխում ներկայացվում են եռամսյակային եկամուտների և ծախսերի վերլուծությունը: Ի տարբերություն մնացած էջերի, այս էջում տեղեկատվությունը ներկայացվում է 5 իրար հաջորդող եռամսյակների համար, բացի դրանից, այս էջում եռամսյակային եկամուտների և ծախսերի մեծությունը տարեկանացվում է (բազմապատկվում է 4-ով) և հարաբերվում եռամսյակային միջին ակտիվների մեծությանը: Այս գլխում պարունակվող տեղեկատվությունը թույլ է տալիս եզրակացություններ կատարել բանկի եկամուտների և ծախսերի եռամսյակային փոփոխությունների վերաբերյալ: Այս գլխում պարունակվող տեղեկությունների մի մասը ուսումնասիրվում է նաև 1, 2-րդ, 3-րդ գլուխներում: Տվյալները վերցվում են բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող «Կանոնակարգ 3-ի» ձև թիվ 5 հաշվետվությունից:

Ընդամենը տոկոսային եկամուտներ

Հաշվառվում է որպես եռամսյակային տոկոսային եկամուտների և եռամսյակային միջին ակտիվների հարաբերակցություն:

Ընդամենը տոկոսային ծախսեր

Բանկի եռամսյակային տոկոսային ծախսերի և եռամսյակային միջին ակտիվների հարաբերակցությունը:

Չուտ տոկոսային եկամուտ

Եռամսյակային Չուտ տոկոսային եկամուտների և եռամսյակային միջին ակտիվների հարաբերակցությունը:

Ոչ տոկոսային եկամուտներ

Եռամսյակային ոչ տոկոսային եկամուտների և եռամսյակային միջին ակտիվների հարաբերակցությունը:

Ոչ տոկոսային ծախսեր

Եռամսյակային ոչ տոկոսային ծախսերի և եռամսյակային միջին ակտիվների հարաբերակցությունը:

Չուտ ոչ տոկոսային եկամուտներ

Եռամսյակային Չուտ ոչ տոկոսային եկամուտների և եռամսյակային միջին ակտիվների հարաբերակցությունը:

Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին

Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր և հատուկ պահուստներին, արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին կատարված մասհանումների հարաբերակցությունը եռամսյակային միջին ակտիվների գումարին:

Պահուստներին կատարված մասհանումների վերադարձ

Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր և հատուկ պահուստներից և արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստից վերադարձի հարաբերակցությունը եռամսյակային միջին ակտիվների գումարին:

Չուտ մասհանումներ

Ակտիվների հնարավոր կորուստների պահուստների հատկացումների և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված մասհանումների վերադարձի տարբերության հարաբերակցությունը եռամսյակային միջին ակտիվների գումարին:

Շահույթ մինչև հարկվելը

Եռամսյակային մինչև հարկվելը շահույթի հարաբերակցությունը եռամսյակային միջին ակտիվների գումարին:

Չուտ շահույթ

Եռամսյակային զուտ շահույթի հարաբերակցությունը եռամսյակային միջին ակտիվների գումարին:

Հաշվարկված շահաբաժիններ

Սեփականատերերին վճարված շահաբաժինների մեծության հարաբերակցությունը եռամսյակային միջին ակտիվների գումարին:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթի և եռամսյակային միջին ակտիվների հարաբերակցությունը:

Չուտ շահույթ / միջին ընդհանուր կապիտալ

Բանկի եռամսյակային զուտ շահույթի հարաբերակցությունը եռամսյակային միջին կապիտալի գումարին:

Չուտ ոչ տոկոսային եկամուտ / զուտ տոկոսային եկամուտ

Բանկի եռամսյակային զուտ ոչ տոկոսային եկամուտի հարաբերակցությունը եռամսյակային զուտ տոկոսային եկամուտներին:

Չուտ շահույթ / բաժնետոմսերի քանակ

Բանկի զուտ շահույթի և թողարկված բաժնետոմսերի քանակի հարաբերակցությունը:

ՄԱՐԺԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միջին եկամտաբեր ակտիվներ / միջին ընդհանուր ակտիվներ

Եռամսյակային եկամտաբեր ակտիվների (վարկային ներդրումներ – ժամկետանց վարկեր + բանկերում տեղաբաշխված դեպոզիտներ + ֆակտորինգ + լիզինգ + ներդրումներ արժեթղթերում) և եռամսյակային միջին ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Ծախսատար պարտավորություններ / միջին ընդհանուր ակտիվներ

Բանկի եռամսյակային ծախսատար պարտավորությունների և եռամսյակային միջին ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը:

Տոկոսային եկամուտներ / միջին եկամտաբեր ակտիվներ

Բանկի եռամսյակային տոկոսային եկամտի և եռամսյակային եկամտաբեր ակտիվների հարաբերակցությունը:

Տոկոսային ծախսեր / միջին եկամտաբեր ակտիվներ

Բանկի կողմից վճարված տոկոսային ծախսի և եռամսյակային եկամտաբեր ակտիվների հարաբերակցությունը:

Չուտ տոկոսային եկամուտներ / միջին եկամտաբեր ակտիվներ

Բանկի եռամսյակային զուտ տոկոսային եկամտի և եռամսյակային եկամտաբեր ակտիվների հարաբերակցությունը:

ՎԱՐԿԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով Պ/Ֆ մնացորդ / վարկեր և դեբիտորական պարտքեր

Տվյալ օրվա դրությամբ վարկերի և դեբիտորական պարտքերի գծով հնարավոր կորուստների ծածկման պահուստաֆոնդի հարաբերակցությունը վարկային ներդրումների և դեբիտորական պարտքերի գումարին:

Վարկերի և դեբիտորական պարտքերի կորուստների ծածկույթը շահույթով

Եռամսյակային գործառնական եկամտի և վարկերի և դեբիտորական պարտքերի գծով հնարավոր կորուստների ծածկման պահուստի գումարի հարաբերակցությունը զուտ կորուստի մեծությանը (եռամսյակային հատկացումներ վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին - (եռամսյակային վերադարձներ դասակարգված բայց դեռևս դուրս չգրված ակտիվների գծով + եռամսյակի ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված վարկերի և դեբիտորական պարտքերի մարում):

Վարկերի և դեբիտորական պարտքերի զուտ դուրս գրումներ / վարկեր և դեբիտորական պարտքեր

